



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ.  
21-րդ դարի մարտահրավերներ  
և հնարավորություններ

**DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:  
Challenges and Opportunities of 21st Century**

**РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:  
ВЫЗОВЫ И ВОЗМОЖНОСТИ 21-ОГО ВЕКА**

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06  
ԳՄԴ 65  
Տ 778

Հրապարակվում է  
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

**Խմբագրական խորհրդի նախագահ՝<sup>1</sup>**

**ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ**  
ՀՊՏՀ ռեկտոր, դր.դ.դ., պրոֆեսոր

**Խմբագրական խորհրդի՝<sup>1</sup>**

- |                           |   |
|---------------------------|---|
| <b>ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ -</b>    | ՀՊՏՀ միջազգային գիտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, դր.դ.դ., դոցենտ |
| <b>ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ -</b> | ՀՊՏՀ բնօգուագործման գիտեսագիլուության ամբիոնի վարիչ, դր.դ.դ., պրոֆեսոր      |
| <b>ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ -</b>  | ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և առողիքի ֆակուլտետի դեկան, դր.դ.դ., պրոֆեսոր   |
| <b>ԽՈՐԵՆ ՄԵԽԻԹԱՐՅԱՆ -</b> | ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, դր.դ.թ., դոցենտ                  |
| <b>ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ -</b> | ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, դր.դ.դ., պրոֆեսոր                            |
| <b>ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ -</b>  | ՀՊՏՀ գրնչես. ինֆորմ. և լրեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, դր.դ.դ., պրոֆեսոր      |
| <b>ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ -</b>  | ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., դր.դ.դ., պրոֆեսոր              |
| <b>ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ -</b>  | ՀՊՏՀ պրոռեկտոր, դր.դ.դ., պրոֆեսոր   |

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և  
Տ 778 հնարավորություններ: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ,  
2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06  
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

## ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիրաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորին Հայաստանի պետական գյուղեսագիրական համալսարանի 27-րդ գիրաժողովի բացման առթիվ և ցանկանում են շնորհակալություն հայրնել գիրաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել գյուղեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրապարակ հարցերի նկարմամբ:

Մեր համալսարանի գործադրության մեջ նշանակած է գյուղական գիրաժողովները գեղեցիկ պահպանությամբ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիրական գործունեությունն արդացողություն այլ ձևաչափեր նույնականացնելու համար: Հայարդությամբ եմ նշում, որ հետազողական համալսարան դառնալու և մեր պետության գյուղեսական կյանքին մասնագիրական մասնակցություն ունենալու իմ գեղականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազողական կենտրոնի գործունեությունն այսօր դաշտի է նշանակալի արդյունքներ. այսպես ոչ միայն իրականացվում են հանրապետության գյուղեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազողություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ գործադրությամբ կազմակերպումը գիրական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական գործեց գիրառուսումնական լարորագորիաների մեջնարկը, ինչը գիրական դրամաշնորհներ, գիրառուսումնական խմբեր և գիրահետքազողական կյանքի աշխատավայր միրված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոդելումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի գործադրությունը եւ հավելապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիրական ներուժը, ցոյց դա համալսարանում գիրական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիրաժողովի հիմքում գյուղեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցոյց են դնում մեր դարաշրջանի մարդասիրավերներն ու հնարավորությունները: Խսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չեն պարբեր թողնեն գյուղեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ գյուղեսության:

Հուսով եմ, որ գիրաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կրա մասնագետներին ներկայացնելու իրենց մոդելումները, բացահայտելու գիրաժողովի խորագրում արդացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխատությամբ եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ  
ՀՊՏՀ ռեկուր, պրոֆեսոր

VAHAN BABAYAN

## THE ESSENCE OF THE RISK MANAGEMENT SYSTEM OF THE HIGHER EDUCATION INSTITUTION

**Key words:** higher education institution, risk, risk management system, risk management process

The main risks of educational and research activity of higher education institutions are presented in the article, and then the risk management system is advanced, which is intended for use in higher educational institutions, contributing to the increase of their activity efficiency.

### ԱՐԱՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

Տնտեսագիրության դոկտոր, պրոֆեսոր, <ՊՏԸ<

### ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Տնտեսագիրության թեկնածու, ասիստենտ, <ՊՏԸ<

### ՀԱՅԿ ԳԱԼՈՍՅԱՆ

Հայաստանի գրարաժքային զարգացման  
հիմնադրամի ծրագրերի համակարգող,  
գնդեսագիրության թեկնածու

## ՀՀ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԼՈՒՇՈՒՄՆԵՐ

**Հիմնաբառեր.** պետական կառավարում, գեղական ինքնակառավարում, ապակենպրոնացում, անհամամասնություն, անհամաշափություն, լիազորություններ, համայնքների խոշորացում

Հայաստանում գեղական ինքնակառավարումը նախորդ երկու դրանամյակներում ունեցել է և՝ ձեռքբերումներ, և՝ ձախողումներ, ինչը փորձի պակասի և ոչ ճիշտ մոդելումների արդյունք է: Այժմ ոլորդում նոր շրջադարձային մոդելումներ են դրսնորվում համայնքների խոշորացման ճանապարհով, ինչը լրագույն և համակողմանի ուսումնասիրության կարիք ունի:

Սույն հոդվածում քննարկվել և ներկայացվել են գեղական ինքնակառավարման համակարգում իրականացվող միջոցառումները և առկա հիմնախնդիրները:

Տեղական ինքնակառավարումը Հայաստանում քանամյա պատմություն ունի, որի ընթացքում եղել են և՝ ձեռքբերումներ, և՝ ձախողումներ: Զախողումներն առաջին հերթին պայմանավորված են եղել փորձի պակասով, ինչպես նաև շատ հարցերում դրսի փորձի տեղայնացման ոչ ճիշտ մուտեցումներով՝ առանց հաշվի առնելու մեր երկրի բնակլիմայական, տարածքային, ռելիեֆային, տնտեսական, քաղաքական, ժողովրդագրական, մշակութային, կրոնական, իրավական դաշտի և այլ առանձնահատկությունները: Ամբողջու-

թյամբ չեն վերլուծվում և ի հայտ բերվում այն խնդիրները, որոնք հրատապ լուծման կարիք ունեն, որովհետև դրանք կարող են ոչ միայն նպաստել, այլև խոչընդոտել տեղական ինքնակառավարման մարմինների ամենօրյա, առավել ևս հեռանկարային գործընթացների արդյունավետ իրականացումը: Ժամանակակից պայմաններում մշտապես փոփոխվող աշխարհում տեղի են ունենում այնպիսի գործընթացներ, որոնք չեն շրջանցում նաև մեր երկիրը, մասնավորապես՝ նկատի ունենք ինչպես Արցախյան հակամարտությունը և փիրուն զինադադարը, այլև տարբեր երկրներում ընթացող տեղային պատերազմները (Սիրիա, Իրաք, Աֆղանստան, Ուկրաինա և այլն), 2008 թ. ԱՄՆ-ում սկսված ֆինանսական ճգնաժամը, որը վերածվեց համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի, կառավարման բոլոր օլակներում ոչ արդյունավետ ու ժամանակին կիրառվող գործիքակազմի և գործելառմի առկայությունը, բերեցին և շարունակում են բերել նրան, որ տեղական ինքնակառավարման մարմինները դեռևս չեն կարողանում լուծել իրենց առջև դրված գունե նվազագույն խնդիրները, ինչն էլ դառնում է ազգաբնակչության դժգոհության պատճառ: Իսկ եթե նկատի ունենանք ամբողջ հանրապետությունում համայնքների զարգացման ցցուն անհամաշափություններն ու անհամամասնությունները, ինչպես նաև դրանք փորձենք համեմատել Երևան քաղաքի հետ, ապա պարզ կդառնա, որ կարծես կառուցում ենք քաղաք պետություն, ի դեմս Երևանի, որը մեր պայմաններում անթույլատրելի է, որովհետև Երևան քաղաքում ևս չափիցավելի կենտրոնացումը բերում է լուրջ խնդիրների առաջացման: Որպեսզի ասվածը մերկապարանց չհնչի, ներկայացնենք մի քանի վիճակագրական տվյալներ: Հայաստանում մարզային մակարդակով ՀՆԱ ցուցանիշը չի հաշվարկվում, սակայն փորձագիտական վերլուծությունը ցույց է տալիս, որ տնտեսական զարգացումը հիմնականում կենտրոնացած է Երևանում և Սյունիքի մարզում (այսուակ 1):

#### Այսուակ 1

#### **Մեկ շնչի հաշվով ՀՆԱ հարաբերակցությունը միջին հանրապետականի նկարմամբ ՀՀ մարզերում և Երևանում 2009–2012 թթ. (%)**

Տարե թիվը	Երևան	Արագածոտքն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց Ձոր	Տավուշ
2009	172.3	65.0	68.2	67.4	63.9	42.4	66.9	57.6	97.1	52.1	39.5
2010	162.3	85.4	74.2	62.1	68.2	47.5	65.3	54.4	133.9	55.1	46.4
2011	148.7	78.6	73.8	70.6	74.6	59.3	70.5	65.0	140.2	59.5	54.8
2012	151.7	82.6	71.1	67.0	69.7	52.7	78.4	59.7	133.5	57.7.	62.6

Եթե փորձենք վերլուծել այս ցուցանիշը, առաջին հերթին, նկատելի է, որ ՀՆԱ ցուցանիշը բարձր է այնտեղ, որտեղ զարգացած է հանքահումքային արդյունաբերությունը, որն առավել ակնհայտ է, եթե դիտարկում ենք ըստ մարզերի արդյունաբերական արտադրանքի ցուցանիշները (այսուակ 2):

**ՀՀ մարզերում և Երևանում արդյունաբերական արդադրանքի ծավալը 2011–2015 թթ.  
(մլն դրամ)՝<sup>1</sup>**

	2011	2012	2013	2014	2015
Երևան	423435.9	450104.9	507541.4	543868.8	552818.1
Արագածոտն	21637.9	19554.4	25112.7	29939.0	25729.6
Արարատ	80864.9	104759.2	123721.2	131971.3	173151.2
Արմավիր	41841.8	44471.3	50452.2	54392.7	57598.9
Գեղարքունիք	17959.5	21657.7	23665.5	22573.2	29562.6
Լոռի	73496.8	80041.7	75275.0	69941.2	120165.8
Կոտայք	10449.5	144948.9	166121.7	167399.6	138485.2
Շիրակ	42766.8	40723.4	42623.7	48897.0	40668.8
Սյունիք	178366.5	198723.7	204975.2	197631.1	178684.5
Վայոց Ձոր	7765.0	9099.9	12008.3	15420.2	15654.8
Տավուշ	6332.1	7821.6	10573.4	9240.0	10180.8

Տարածքային անհամաչափ զարգացման խնդիրը նոր չէ թե՝ Հայաստանում, թե՝ այլ երկրներում, և պատճառական չէ, որ խնդիրը կարևորվում է նաև կառավարության մակարդակով, և ՀՀ կառավարության 2017–2022 թթ. ծրագրի տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում բաժնում տեսնում ենք. «Հայաստանի տարածքների բնակչիմայական առանձնահատկությունները, արտադրողական ուժերի ու բնական ռեսուրսների անհամաչափ բաշխումը, տնտեսական զարգացման, սոցիալական, ժողովրդագրական ու մշակութային տարբերությունները պայմանավորել են տարածքային միավորների զարգացման մակարդակների անհամաչափություններ և անհրաժեշտություն են առաջացրել մշակել տարածքների անհամաչափությունների մեղմմանն ուղղված գործողություններ»<sup>2</sup>:

«Հայաստանի Հանրապետության 2016–2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարության» մեջ տարածքային զարգացման նպատակը սահմանելիս նշվում են ակտիվության աճը, բոլոր մարզերում համընթացության և կայունության ապահովումը<sup>3</sup>: Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը այս խնդրի լուծման մոտեցումների մեջ հատկապես կարևորում է համայնքների խոշորացումը, և անհամաչափ զարգացման պատճառներից մեկը համարում են մեծ թվով և ոչ օպտիմալ գործող համայնքների առկայությունը: Այս տեսակետը պաշտպանում են շատ մասնագետներ, ովքեր վկայակոչում են մի շարք երկրների (Գերմանիա, Շվեյցարիա և այլն) համայնքների խոշորացման փորձը և նշում, որ, թեկուզ միայն ֆինանսական կողմը դիտարկելով, արդարացված չէ ավելի քան 900 համայնքների առկայությունը:

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, [http://www.armstat.am/file/article/marz\\_2016\\_10.pdf](http://www.armstat.am/file/article/marz_2016_10.pdf)

<sup>2</sup> <http://www.mtad.am/9EEFD115-4965-45DE-8E8F-8DCD54E67908/FinalDownload/DownloadId-022529A73B1D200879528ECB20DEBAD6/9EEFD115-4965-45DE-8E8F-8DCD54E67908/files/docs/1663.pdf>

<sup>3</sup> [https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/arc\\_voroshum/2016/07/ardzanagrayinNrq064.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2016/07/ardzanagrayinNrq064.pdf)

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում ևս պարզվել է, որ անցած քսան տարիների ընթացքում կառավարման ապակենտրոնացումը ոչ դյուրին գործընթացների արդյունքում ունեցել է որոշակի ձեռքբերումներ: Վերջինս պայմանավորված է նաև նրանով, որ տեղական ինքնակառավարման ուժեղացումը բոլորովին էլ նպատակ չունի թուլացնել պետական կառավարման այս կամ այն մարմնի դերը, այլ հակառակ՝ հստակեցնելով կառավարման յուրաքանչյուր օղակի լիազորությունները պետք է ավելի ուժեղացնել դրանց համագործակցությունը, հեռանկարային ռազմավարական ծրագրերի մշակումը և դրանք կյանքի կոչելու գործընթացները: Միաժամանակ, փորձը ցույց է տալիս, որ այս գործընթացների արդյունավետությունն էապես պայմանավորված է ոչ թե միասնական, համընդհանուր մոտեցմամբ, այլև յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, կոնկրետ խնդրին տարբերակաված մոտեցման դրսորմամբ<sup>1</sup>:

Կարծում ենք, որ այդ երկու մոտեցումներն էլ խիստ ծայրահեռ են. սոցիալական ցանկացած երևոյթ կամ գործընթաց, բարեփոխում կամ նույնիսկ չնշին փոփոխություն ունի թե՛ դրական, թե՛ բացասական կողմեր: <Ետևաբար> խնդիրը տվյալ դեպքում դառնում է ոչ թե միայն դրական արդյունք ենթադրող կամ միայն դրական հետևանքներ ունեցող փոփոխություն կատարելը, այլև համապատասխան գործողությունների միջոցով հնարավոր դարձնել դրական արդյունքների գերակշռության հասնելը բացասականների նկատմամբ:

Խնդիրն այն է, որ յուրաքանչյուր համայնք ունի իր առանձնահատկությունները, որոնք այս կամ այն միասնական մոտեցման դեպքում կարող են ընդհանուր գործընթացների վրա ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն: Սա հաշվի առնելով՝ հարկ է նշել, որ համայնքները խոշորացնելիս, միջհամայնքային միավորումներ ստեղծելիս, անհրաժեշտ օրենքները և ենթաօրենսդրական ակտերը մշակելիս պետք է ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրել և յուրաքանչյուր առանձին դեպքում բազմակողմանիորեն հիմնավորել ու գնահատել համայնքներին նոր լիազորություններ փոխանցելու բոլոր հնարավորություններն ու դժվարությունները:

Ընդ որում, Հայաստանում համայնքների խոշորացման դեպքում դրական արդյունքներ կամ ցանկալի փոփոխություններ են համարվում.

1. մարդկային ռեսուրսների համախմբումը,
2. համայնքի կառավարման արդյունավետության բարձրացումը,
3. տեղական ինքնակառավարման մարմինների մրցակցային և թափանցիկ ընտրությունների ապահովման հնարավորությունների ընդլայնումը,
4. ենթակառուցվածքների զարգացումը և ծառայությունների արդյունավետության ու որակի բարձրացումը,
5. ավելի մեծ թվով մարդկանց որակյալ ծառայություններ տրամադրելու հնարավո-

<sup>1</sup> Ա.Զաքարյան, Ն.Կիրակոսյան, Տեղական ինքնակառավարման կատարելագործման արդի խնդիրները ՀՀ-ում, ՀՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտ, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական արդի հիմնախնդիրները» գիտական հոդվածների ժողովածու-8, Եր., 2006, էջ 366:

բոլորունների ստեղծումը,

6. ֆինանսական կարողությունների ուժեղացումը և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ընդլայնումը,
7. համայնքային գաղացման կապիտալ ծրագրերի իրականացումը և այլն<sup>1</sup>:

Հայտնի է, որ Հայաստանի անկախության հոչակումից հետո անհրաժեշտություն առաջացավ կառավարման համակարգում ևս կատարել լրջագոյն փոփոխություններ, որոնք, անշուշտ, պայմանավորված էին պետական կառավարման համակարգի ժողովրդավարացմամբ, վարչատարածքային միավորների առանձնացմամբ և ապակենտրոնացմամբ: Այդ իսկ պատճառով էլ 1995 թ. հունիսի 5-ին ընդունված ՀՀ սահմանադրությամբ սահմանվեցին ՀՀ-ում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի ձևավորման և դրանց լիազորությունների հիմնական դրույթները՝ ըստ որի մարզերում իրականացվում է պետական կառավարում, իսկ համայնքներում՝ տեղական ինքնակառավարում: Հարկ է նշել, որ տեղական ինքնակառավարումը, առավելապես շուկայական հարաբերություններին բնորոշ և մի շարք երկրներում արդեն իսկ փորձով հաստատված արդյունավետություն ապահովող կառավարման ձև լինելով հանդերձ, միաժամանակ պայմանավորում է երկրում տեղի ունեցող գործընթացների իրականացման առանձնահատուկ մոտեցումները, օրենսդրական դաշտի նորովի ձևավարումը:

Ցանկացած երկրի տնտեսության արդյունավետ զարգացումը և հզորությունը պայմանավորված են կառավարման կայուն համակարգերի ստեղծմամբ և դրանց համագործակցված ու արդյունավետ գործառույթների իրականացմամբ: Միայն այդ դեպքում երկիրը, համայնքը կարողանան լուծել իրենց առջև դրված հիմնական խնդիրները և գնալ առաջ դեպի կարևորագոյն նպատակը, այն է՝ երկրի զարգացման ճանապարհով բնակչության կյանքի որակի բարելավումը: Այդ իսկ պատճառով էլ համայնքային խնդիրներին հնարավոր լուծում տալու նպատակով դրանց պետք է մոտենալ ոչ թե որպես առանձնացված, մեկուսի միավոր, այլ պետության հիմքը կազմող ամբողջական օրգանիզմի կարևոր բաղկացուցիչ<sup>2</sup>:

Ամեն դեպքում համայնքների խոշորացումն արդեն թևակոխել է միավորման փուլ, որի ընթացքից և արձանագրած հաջողություններից է էապես կախված, թե ինչպիսի արդյունքներ կունենա խոշորացման ծրագիրն առհասարակ: Սա հաշվի առնելով՝ Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզերում պիլոտային սկզբունքով համայնքների խոշորացումից հետո՝ արդեն 2017 թ. խոշորացման գործընթացը նոր փուլ մտավ, և թվով 375 բնակավայրերի միավորմաբ ձևավորվեցին 34 նոր համայնքներ:

Ներկայում այս մասով զիշավոր խնդիրն է լրջորեն հետևել տեղի ունեցող փոփոխություններին, հաշվարկել համայնքների խոշորացման հնարավոր բացասական հե-

<sup>1</sup> Համայնքների խոշորացման և միջիամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ, էջ 26–27:

<sup>2</sup> Ա. Զաքարյան, Ն. Կիրակոսյան, Տեղական ինքնակառավարման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության տնտեսագիտական հետազոտությունների խնստիտուտ, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական արդի հիմնախնդիրները» գիտական հոդվածների ժողովածու-9, Եր., 2007, էջ 181:

տևանքները և մշակել դրանց չեզոքացման արդյունավետ միջոցներ:

Միաժամանակ, յուրաքանչյուր մարզի ու նոր ձևավորված համայնքի համար անհրաժեշտ է մշակել տարածքային զարգացման ռազմավարություն, թարմացնել բոլոր մարզերի տարածքային զարգացման պլանների մեթոդաբանությունը, վերանայել տարածքային զարգացման ֆինանսավորման մեխանիզմները, ցուցանիշներն ու կառավարման տեղեկատվական համակարգերը:

Միայն նման միջոցառումների իրականացմամբ կարելի է ճիշտ հասկանալ և իրականացնել տարածքային համաշափ զարգացման քաղաքականություն:

**ԱՐԱՐԱՏ ԶԱԿԱՐՅԱՆ  
ԿԱՐԱՊԵՏ ԱՐԱԿԵԼՅԱՆ  
ԱՅԿ ԳԱԼՍՏՅԱՆ**

## **ПРОБЛЕМЫ И РЕШЕНИЯ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ РА**

*Ключевые слова: государственное управление, местное самоуправление, децентрализация, дисбаланс, диспропорция, полномочия, расширение сообщества*

*За последние два десятилетия местное самоуправление в Армении имело как приобретения, так и неудачи, что является результатом отсутствия опыта и неправильных подходов. В настоящее время в этой области проявляются новые подходы которые требуют серьезного и многостороннего изучения.*

*В данной статье рассматриваются и излагаются принятые меры в системе местного самоуправления и существующие проблемы*

**ARARAT ZAKARYAN  
KARAPET ARAKELYAN  
HAYK GALSTYAN**

## **PROBLEMS AND DECISIONS OF RA LOCAL GOVERNMENT**

*Key words: public administration, local government, decentralization, imbalance, disproportion, powers, expansion of community*

*For the last two decades local government in Armenia had both acquisitions, and failure that is result of lack of experience and the wrong approaches. Now in this area new approaches which demand serious and multilateral studying are shown.*

*In this article the taken measures in the system of local government and the existing problems are considered and stated*